ՏԱՐԵԳԻՐՔ

2017

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓԱԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական կառույցները:
449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի»: Այս կարգը պահպանվել է դարերի ընթացքում: Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը և, կաթողիկոսական թեմ լինելով, անմիջականորեն կառավարվում է առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2017 թվականի դրությամբ թեմի տարածքում գործում է 33 եկեղեցի, 10 մատուռ, 35 ծուխ: Երևանում գործում է 16 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 32 քահանա: Արարատի մարզում գործում է 17 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում 19 քահանա: Ընդհանուր առմամբ թեմում հոգևոր ծառայություն է մատուցում 52 հոգևորական՝ ներառյալ առաջնորդական փոխանորդը:

2017թ.-ին Արարատյան Հայրապետական թեմում կատարվել է

- 2991 պսակ
- 11020 մկրտություն

Լինելով ազգային՝ Հայ Եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Ցերեկային կենտրոն
3. Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
4. Խուլերի համայնք
5. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
6. Ծնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
7. Տեղեկատվական բաժին՝ էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, qahana.am կայքով ու սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
8. «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ
9. Գրադարան
10. Երիտասարդաց միություններ
11. Տիկնանց միություններ
12. Կիրակնօրյա դպրոցներ
13. Ծխական խորհուրդներ
14. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Պետրոս ավագ քհն. Մալյան

Տ. Շահե քհն. Հայրապետյան

Տ. Անուշավան քհն. Կոշեցյան

Տ. Եսայի քհն. Արթենյան

ՍՈՒՐԲ ՁՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Գրիգոր քհն. Գրիգորյան

Տ. Հայկազուն քհն. Մկրտչյան

Տ. Վահան քհն. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Տիրայր ավագ քհն. Սահրադյան

Տ. Ավետիս ավագ քհն. Դանիելյան

Տ. Դանիել քհն. Բաղումյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
(Նորագավիթ)

Տ. Վարդան քհն. Գափոյան

Տ. Մյուռոն ավագ քհն. Ադամյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Մալաթիա)

Տ. Տիրան ավագ քհն. Առուշանյան

Տ. Գաբրիել քհն. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Նորք-Մարաշ)

Տ. Զաքարիա քհն. Ավետիսյան

Տ. Զգոն քհն. Աբրահամյան

Տ. Թովմա քհն. Անդրեասյան

ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Տ. Զենոն քհն. Բարսեղյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
(Քանաքեռ)

Տ. Բարսեղ ավագ քհն. Ղազարյան

Տ. Շմավոն քհն. Ղևոնդյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
(Նոր Նորք)

Տ.Նորայր ավագ քհն. Բաղդասարյան

Տ. Վարդան ավագ քհն. Մկրտչյան

Տ. Կարապետ քհն. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ
(Դավթաշեն)

Տ. Խորեն քհն. Մարուքյան

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ
(Ներքին Չարբախ)

Տ. Մկրտիչ ավագ քհն. Թովմասյան

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ
(ՀԱԹ)

Տ. Պարթև քհն. Մուրադյան

Տ. Կորյուն ավագ քհն. Մարտիրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Ավան)

Տ. Հարություն քհն. Ավագյան

ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔ

Տ. Բաբկեն քհն. Հայրապետյան

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Տ. Զգոն քհն. Աբրահամյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ
(Նուբարաշեն)

Տ. Բարդուղիմեոս քհն. Հակոբյան

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ
(Եռաբլուր)

Տ. Բաբկեն քհն. Հայրապետյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
(Նոր Նորքի 1-ին զ.)

Տ. Նշան քհն. Ալավերդյան

Տ. Զարեհ քհն. Աշուրյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
(Մրգավան)

Տ. Պարգև քհն. Պալգէորգեան

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
(Բյուրավան)

Տ. Ղազար քհն. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ (Արարատ)

Տ. Դավիթ քհն. Սահակյան

Տ. Եզնիկ քհն. Մալխասյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ (Արգավանդ)

Տ. Գրիգոր քհն. Հովհաննիսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վերին Արտաշատ)

Տ. Մխիթար քհն. Ալոյան

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ (Ներքին Դվին)

Տ. Եղիշե քհն. Նուրիջանյան

Տ. Թադեոս քհն. Թադևոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Վեդի)

Տ. Հովակիմ քհն. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Մարմարաշեն)

Տ. Թաթուլ քհն. Գասպարյան

Տ. Ղուկաս քհն. Բալայան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Դալար)

Տ. Եփրեմ քհն. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Արևշատ)

Տ. Հովսեփ քհն. Սարգսյան

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ (Մասիս)

Տ. Արարատ քհն. Օրդոյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Կանաչուտ)

Տ. Դավիթ քհն. Կյուրեղյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Շահումյան)

Տ. Դերենիկ քհն. Միքայելյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ (Մասիս)

Տ. Աշոտ քհն. Սաֆարյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ (Մխչյան)

Տ. Միքայել քհն. Նուրիջանյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ (Նորաբաց)

Տ. Մարտիրոս ավագ քհն. Ավետիսյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ (Արտաշատ)

Տ. Թաթուլ քհն. Գասպարյան

Տ. Երվանդ քհն. Բաբայան

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Սիրիահայ համայնք

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում գործում է սիրիահայերի համայնքը: Ամեն ուրբաթ կազմակերպվում է քարոզխոսություն՝ արևմտահայերենով: Համայնքում ընդգրկված է 100 ընտանիք:

Խուլերի համայնք

Համայնքն ունի 37 անդամ, 1 թարգմանիչ, 1 հոգևոր սպասավոր: Խուլերի համար ամեն շաբաթ կազմակերպվում է Աստվածաշնչի սերտողության դասընթաց: Գործում է մնջախաղի «Մենք» թատրոն–ստուդիան: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում բոլոր Ս. Պատարագները թարգմանվում են ժեստերի լեզվով:

Քրիստոնեական դաստիրակության կենտրոն

Համակարգում է թեմի կիրակնօրյա դպրոցների գործունեությունը՝ վերահսկելով հիշյալ կրթօջախների ուսումնական պրոցեսը:

Կիրակնօրյա դպրոցների թիվը

13

Ներգրավված երեխաների քանակը

845

Ուսուցիչների քանակը

17

Գրադարան

Հիմնադրվել է 1998թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ: Այն հոգևոր գրականությունից բացի ունի պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, ինչպես նաև՝ արվեստագիտական, ճարտարապետական, մատենագիտական-տեղեկատվական գրականություն:

Գրադարանն ունի

536

ընթերցող:

Բարեգործական ծրագրերի բաժին

Համակարգում է թեմական ու համայնքային բարեգործական ծրագրերը, կազմակերպում է սոցիալական բազմաթիվ միջոցառումներ, համագործակցում է տեղի ու միջազգային կառույցների հետ:

Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակ

Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ 13.000 երեխաների:

«Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ

2017 թ. լույս է տեսել «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթի 22 համար, յուրաքանչյուրը 1000 հատ տպաքանակով:

Թերթին թղթակցել են մշակութային գործիչներ, բանասիրական գիտությունների թեկնածուներ, պատմական գիտությունների թեկնածուներ, թանգարանների գիտաշխատողներ, լրագրողներ:

Բովանդակային մասով թերթում ավելացել են՝ «Հոգևոր ծառայության դժվարին ոլորաններում», «Սուրբ Հովհան Ոսկեբերան», «Մի լուսանկարի պատմություն», «Քրիստոնյա հոգեբանի անկյուն», «Ճշմարիտ գանձ», «Հայ եկեղեցու սրբարար խորհուրդները», «Մենք՝ Վարդանաք», «Հոգևոր անդաստան», «Մելքիսեդեկի կոչումը», «Երևան-2800» խորագրերը:

Տեղեկատվական բաժին

2017թ. Հայաստանի ԶԼՄ-ում հրապարակվել է շուրջ **430** նյութ, որոնք առնչություն են ունեցել Արարատյան Հայրապետական թեմի, թեմի կողմից կազմակերպված միջոցառումների, հոգևորականների ու երիտասարդաց միությունների անդամների մասնակցությամբ ասուլիսների հետ:

320 հրապարակում վերաբերել է Ս. Սարգսի տոնին: Դրանցից 177-ը վերաբերել է թեմի կողմից կազմակերպված միջոցառումներին՝ սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած զինվորների պարգևատրում, Ս. Պատարագ, քայլերթ, համերգ:

Թեմի հոգևորականները մասնակցել են **21** ասուլիսի:

2017թ. թվականին «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում ամեն շաբաթ հեռարձակվել է «Ես կամ...» հաղորդաշարը, որը վարում է Տ. Շահե քահանա Հայրապետյանը:

2017թ. պատրաստվել է 20-րոպեանոց տեսաֆիլմ Ս. Սարգսի տոնի ու տոնակատարությունների մասին:

• Էլեկտրոնային էջ

Տեղեկատվական ու քարոզչական աշխատանքն ամբողջովին արտացոլվում է թեմի պաշտոնական կայքում՝ www.qahana.am, և սոցիալական ցանցերում՝ Ֆեյսբուքյան՝ Qahana.am, Instagram՝ ԱՀԹ տեղեկատվական բաժին, Twitter՝ Արարատյան թեմ :

Ֆեյսբուքյան Qahana.am էջն ունի

63.000
հետևորդ:

www.qahana.am կայքից օգտվել է

345 000
օգտատեր

Գրանցվել է

696 908 այցելություն
1 704 178 էջի դիտում:

• Ռադիոծրագրեր

2017թ. շաբաթական մեկ անգամ պարբերականությամբ Հայաստանի Հանրային ռադիոյով եթեր են հեռարձակվել «Մանանա» մանկապատանեկան և «Շողակն Արարատյան» ռադիոհանդեսները: «Մանանա» մանկական ծրագիրը երեխաների ամենասիրելի հաղորդումներից է: Այն հիմնականում ներկայացնում է ավետարանական հետաքրքրաշարժ պատմություններ, որոնք մատուցվում են հեքիաթների և առակների ձևով՝ մատաղ սերնդի միտքն ու հոգին կրթելով քրիստոնեական առաքինությունների, ազգային ավանդույթների, սիրո, գթասրտության, բարության ոգով:

ԱՀԹ «Շողակն Արարատյան» ռադիոհաղորդումը եթեր է հեռարձակվում 2000 թվականից՝ շաբաթական երկու անգամ հաճախականությամբ (կիրակի՝ 08:05, երեքշաբթի՝ 16:00), տևողությունը՝ 30 րոպե: 2017 թվականի ընթացքում ձայնագրվել է 48 հաղորդում, որոնք ունեն հոգևոր, մշակութային ուղղվածություն: Ծրագիրը պարբերաբար անդրադառնում է եկեղեցական տոներին և թեմում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին:

«Հաղթանակը ձեռք է բերվում ոչ թե շատ զորքով, այլ այն զորութեամբ, որ երկնքից է գալիս»:

(Ա Մակաբայեցիներ 3:19)

Ով սիրում է, նա ծնված է Աստծուց

(Ա Հովհաննես 4:7)

«Սովորեցրո՛ւ ինձ, Տե՛ր, քո ճանապարհը և առաջնորդի՛ր ինձ քո ուղիղ շավիղներով»:

(Սաղմոս ԻԶ 11)

ՀՈԳԵՎՈՐ-ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմի համայնքներում հովվական գործունեության ամենակարևոր հանգրվաններից են դպրոցները, մանկապարտեզները, մանկատները, ծերանոցները: Հոգևոր և ազգային տոների առիթներով թեմի քահանա հայրերը ոչ միայն մասնակցել են տվյալ հաստատություններում կազմակերպված միջոցառումներին, այլև իրենք են նախաձեռնել բազմաթիվ միջոցառումներ գրեթե բոլոր համայնքներում:

Այցելություններ են կատարվել ավելի քան 63 դպրոց, 37 մանկապարտեզներ, ուսումնական և մշակութային կենտրոններ և ծերանոցներ:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արարատյան Հայրապետական թեմում 2017թ.-ին իրականացվել է.

Դեպի Հայաստանի սրբավայրեր՝

270 ուխտագնացություն

9253 մասնակից

Դեպի Արցախ

7 ուխտագնացություն:

Դեպի Արևմտյան Հայաստան

1 ուխտագնացություն:

Դեպի Երուսաղեմ

5 ուխտագնացություն:

ՃԱՄԲԱՐՆԵՐ

2017թ. ամռանն Արարատյան Հայրապետական թեմի մի շարք համայնքներում նախաձեռնվել և կազմակերպվել են բակային ճամբարներ՝ մեկ շաբաթից մեկ ամիս տևողությամբ: Բակային ճամբարներ են կազմակերպվել՝

- ՀԱԹ Ս. Երրորդություն եկեղեցում
- Դավթաշենի Ս. նահատակաց եկեղեցում
- Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում
- Մրգավանի Ս. Հակոբ եկեղեցում
- Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցում
- Մարմարաշենի Ս. Գևորգ եկեղեցում
- Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցում
- Մասիսի Ս. Թադեոս եկեղեցում
- Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում
- Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցում

Բակային ճամբարներին մասնակցել է

750

երեխա

ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՀԹ բոլոր եկեղեցիներում 2017 թվականին կազմակերպվել է Հսկման կարգ, Ս. Գրքի սերտողություն, քարոզխոսություն. իրականացվել է 1016 հոգևոր–քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է 35 460 հավատացյալ:

Հոգևոր քարոզչության է իրականացվել նաև համայնքների *մշակութային, կրթական և հասարակական* կառույցներում. կազմակերպվել է 534 հոգևոր–քարոզչական միջոցառում, որոնց մասնակցել է 43 310 հավատացյալ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆԵՐ

ա. Սուրբ Ծնունդ

Սուրբ Ծննդյան տոնին ԱՀԹ բոլոր եկեղեցիներում տոնական Ս. Պատարագից հետո կազմակերպվեցին ամանորյա միջոցառումներ համայնքի երեխաների համար և տոնական միջոցառումներ դպրոցներում ու մանկապարտեզներում:

բ. Ս. Սարգսի տոն

Արարատյան Հայրապետական թեմում Ս. Սարգսի տոնը նշվեց տոնական մեծ միջոցառումներով և ավանդական քայլերթով: Ս. Սարգսի տոնին նվիրված միջոցառումներն իրականացվում են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ և նախաձեռնությամբ:

- 11.02.2017. Ս. Սարգսի տոնի շրջանակներում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի կողմից պարգևատրվեցին սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած 20 ժամկետային զինծառայողները: Նրանց հանձնվեցին Ս. Սարգիս զորավարի խորհրդանշական խաչեր, խրախուսական 200.000-ական ՀՀ դրամ և տոնի հուշանվերներ: Զինծառայողներին ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից տրամադրվեց նաև տասնօրյա արձակուրդ:
- 11.02.2017. Քայլերթ:
- Միջոցառումներ

ա. 07.02.2017. Սուրբ Սարգսի տոնին ընդառաջ, Արարատյան Հայրապետական թեմի խուլերի «Մենք» մնջախաղի ստուդիան Տիկնիկային թատրոնում հանդես եկավ «Օրհնված երազ» բեմականացմամբ:

բ. 10.02.2017. Համերգ Կարապի լճի մոտ:

գ. 10.02.2017. Արարատյան Հայրապետական թեմի և «Բուկինիստ» գրախանութների ցանցի համագործակցության արդյունքում իրականացվեց «Իմ գաղտնի գրքաՍԵՐ» խորագրով միջոցառում-ակցիան:

դ. 10.02.2017. Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում Երիտասարդական ակումբների դաշնության (FYCA) և Արարատյան Հայրապետական թեմի նախաձեռնությամբ տեղի ունեցավ սիրո և երիտասարդների արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնին նվիրված միջոցառում:

ե. 10.02.2017. Ամփոփվեց Գ. Սունդուկյանի անվան Ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպված՝ Սուրբ Սարգսի տոնին նվիրված ցուցահանդես-մրցույթը:

զ. 11.02.2017. Համերգ Սիրահարների այգում:

գ. Բարեկենդան

Արարատյան Հայրապետական թեմում Բուն Բարեկենդանը նշվեց մեծ շուքով և նախատոնական միջոցառումներով.

26.02.2017. Կազմակերպվեց շքերթ՝ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց դեպի Ազատության հրապարակ՝ ազգային դիմակներով, խաղերով, երգուպարով, մրցույթներով:

Արարատյան Հայրապետական թեմի նախաձեռնությամբ, Մշակույթի նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Երևանի վարչական բոլոր շրջաններում իրակա-

նացվեցին բարեկենդանյան երկշաբաթյա միջոցառումներ:

դ. Տեառնընդառաջ

Տեառնընդառաջի տոնը Հայ Առաքելական եկեղեցին նշում է փետրվարի 14-ին:

13.02.2017. Երեկոյան ժամերգությունից հետո, Արարատյան Հայրապետական թեմի եկեղեցիներում կազմակերպվեցին ազգային տոնախմբություններ, վառվեցին խարույկներ:

14.02.2017. ԱՀԹ բոլոր եկեղեցիներում մատուցվեց տոնական Ս. Պատարագ, հավարտ որի կատարվեց նորապսակների օրհնության կարգ:

ե. Սուրբ Հարություն

2017թ. ապրիլի 16-ին Հայ Առաքելական եկեղեցին նշեց Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնը:

15.04.2017. Իրականացվեց «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթ Երևանում:

16.04.2017. Թեմի եկեղեցական համայնքներում կազմակերպվեց հավկիթների օրհնություն, սիրո ճաշ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ եկեղեցիների երիտասարդաց միությունների և համայնքի անդամների մասնակցությամբ:

զ. Ս. Խաչին նվիրված տոներ

Տարվա ընթացքում Սուրբ Խաչին նվիրված տոներին (Խաչի երևման տոն, Խաչվերաց, Վարագ Սուրբ խաչի և Գյուտ խաչի տոն) երիտասարդաց միությունների անդամներն իրականացնում են «Խաչի քարոզ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում երիտասարդները վարորդներին և անցորդներին ներկայացնում են խաչի խորհուրդը, պատմում են տոնի մասին, նրանց օրհնված խաչ են նվիրում, որի փոխարեն վերցնում են երթուղայինում առկա աչքի ուլունքներն ու սնոտիապաշտական իրերը:

18.06.2017. Խաչի քարոզ Նոր Նորքի առաջին զանգվածում

16.09.2017. Խաչվերաց տոն. Խաչի քարոզ Ազատության պողոտայում

29.10.2017. Ս. Խաչի Գյուտի տոն. Խաչի քարոզ Երևանի Հարավարևմտյան թաղամասում

ը. Վարդավառ

2017 թվականի հուլիսի 22-ին Հայ Առաքելական եկեղեցին նշեց Վարդավառի տոնը:

22.07.2017. Թեմի երիտասարդաց միությունները «Վերակագնենք մեր ազգային տոները» խորագրի ներքո կազմակերպեցին Վարդավառի նախատոնակ, որին մասնակցեցին «Մասունք», «Վարք հայոց», «Վան», «Վերադարձ», «Ձարթոնք», «Նուբար» ազգագրական երգուպարի խմբերը, Երևանի վարչական շրջանի մշակույթի բաժինների ենթակայության ներքո գործող խմբերն ու դրանց անդամները:

թ.Վերափոխում

13.08.17. Թեմի համայնքներում իրականացվեցին տոնական միջոցառումներ, մատուցվեց սիրո ճաշ:

ժա. Ս. Աբգար թագավորի տոն

05.12.17. Տոնի առթիվ իրականացվեց միջթեմական շախմատային մրցաշար:

Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ

Միջազգային հասարակական World Vision Armenia, WCC Armenia Round Table Foundation, ARCS, ARDA կազմակերպությունների, ինչպես նաև անհատ բարերարների հետ համագործակցության արդյունքում Արարատյան Հայրապետական թեմում **2017թ.** նախաձեռնվել և կյանքի են կոչվել բազմաբնույթ բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ: Դրանք իրականացվել են եկեղեցական և պետական հետևյալ տոների ժամանակ.

- Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոն
- Հայոց բանակի օր
- Ս. Վարդանանց տոն
- Ս. Սարգիս զորավարի տոն
- Տեառնընդառաջի տոն
- Ծաղկազարդի տոն
- Մայրության և գեղեցկության տոն
- Ս. Հարության տոն
- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր
- Ս. Աստվածածնի վերափոխման տոն
- Ս. Խաչվերացի տոն
- Տարեցների միջազգային օր
- Հաշմանդամների միջազգային օր
- Ամանոր

Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել թեմին օգնության դիմում ներկայացրած անապահով **17 ընտանիքի** (գրենական պիտույքներ, հագուստ, սնունդ, ծածկոցներ, կոշիկ, հիգիենայի պարագաներ):

Հայոց բանակի 25-ամյակի կապակցությամբ այցելություններ են կատարվել Բերդի զորամաս և զորամասին պատկանող հենակետեր: Տարվել է Արարատի Ս. Հակոբ և Դալարի Ս. Աստվածածին եկեղեցիների համայնքների, ինչպես նաև Առաջնորդարանի տրամադրած օգնությունը (հագուստ և գրենական պիտույքներ):

Ս. Սարգսի տոնի առթիվ Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցում Սարգիս անունը կրող **31 անձանց** բաժանվել է գրենական պիտույքների փաթեթ:

«Հավատ և սեր» ՀԿ-ի **32** և **«Լույսի Աստղ»** հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով երեխաների ՀԿ-ի **20 երեխաներ** ստացել են գրենական պիտույքների փաթեթներ:

Ս. Վարդանանց տոնի կապակցությամբ Արցախի **«Եղնիկներ»** զորամաս է ուղարկվել ԱՄՆ-ից ստացված **78 տաք գլխարկ**:

Տեառնընդառաջի կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել Արաբկիրի հաշմանդամություն ունեցող անձանց ընկերության **53 անդամի**: Նրանց տրամադրվել են հագուստ և գրենական պիտույքների փաթեթներ:

Մայրության տոնի առթիվ Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցու երիտասարդաց միության անդամներն Արտաշատի ծննդատուն կատարած այցելության ժամանակ **14 նորածինների մայրիկների** նվիրել են նորածնի խնամքի համար նախատեսված պարագաներ և հագուստ:

Երեբունի վարչական շրջանի **«Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն»**-ում հաշվառված **20 կանանց** նվիրաբերվել է հագուստ:

Ծաղկազարդի կապակցությամբ Զրաշենից, Բարձրաշենից, Հովտաշենից, Նշավանից Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի ժամանած **300 մանուկների** բաժանվել են նվերներ՝ հագուստ, խաղալիք, կոշիկ:

Սուրբ Հարության տոնի առթիվ «Կոբրա» ՀԿ-ում հաշվառված **200 հաշմանդամություն ունեցող անձանց** տրամադրվել է հագուստ, գրենական պիտույքներ:

Սուրբ Հարության տոնի առթիվ առաջնորդարանում սննդի փաթեթներ՝ հավկիթ, բրինձ, հյուր, նպարեղեն, շաքարավազ, գինի, ինչպես նաև գրենական պիտույք, հագուստ է բաժանվել թեմին օգնության խնդրանքով դիմած **30 անապահով ընտանիքի:**

Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցում, համայնքի երիտասարդների բարերարությամբ, անապահով ընտանիքների **52 երեխա** ստացել է հագուստ, կոշիկ, նրանց համար կազմակերպվել է նաև հյուրասիրություն:

Մասիսի Ս. Գևորգ եկեղեցին համայնքի խիստ կարիքավոր **5 ընտանիքի** հատկացրել է 1**00.000 դրամի** օգնություն՝ գումարի և սննդի տեսքով՝ բարերարությամբ համայնքի ծխական անդամների և Հայկուհի Տեր-Նշանյանի:

Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ հաշմանդամ երեխաների ծնողների «Մարիամ» և «Զեյթուն» ՀԿ-ների **60 հաշմանդամություն ունեցող երեխայի** տրամադրվել է հագուստ, խաղալիք, կոշիկ, գրենական պիտույքներ:

Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցում թիվ 1 հիմնական դպրոցի ներառական կրթություն ստացող **39 հաշմանդամություն ունեցող երեխայի** բաժանվել են նվերների փաթեթներ:

Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում նվերների փաթեթներ են բաժանվել (հագուստ, գրենական պիտույքներ, գրքեր, պայուսակներ) **ՀԵԵՄ** կրթադաստիարակչական կենտրոնի **60 սաների**:

Վերին Արտաշատի Ս. Աստվածածին եկեղեցուն տրամադրվել է **200 կտոր հագուստ՝** Նորաշեն գյուղի մանկապարտեզում և բուժկետում հաշվառված **50 անապահով ընտանիքի՝ Պայծառակերպության տոնի** առթիվ նվիրելու համար:

Արարատի մարզի Շահումյանի Ս. Աստվածածին եկեղեցուն տրամադրվել է **150 կտոր հագուստ՝** Շահումյան գյուղի **30 կարիքավոր ընտանիքի՝ Պայծառակերպության տոնի** առթիվ նվիրելու համար:

Հայկական «Կարմիր Խաչ» ընկերության երիտասարդական բաժնի կամավորները ՄԻԱՎ-ով ապրող երևանաբնակ և Երևանի մերձակա շրջաններում բնակվող առավել կարիքավոր **35 ընտանիքի** փոխանցել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:

Վարդավառի կապակցությամբ Ս. Հովհաննես եկեղեցու երիտասարդների հետ իրականացվել է **7 տնայց**, որոնց ընթացքում տարվել են սնունդ, հագուստ, կոշիկ, հիգիենայի փաթեթներ, գրենական պիտույքներ, կանացի պայուսակներ:

Մարմարաշենի Ս. Գևորգ եկեղեցու բակային ճամբարի մասնակից **200 երեխաների** տրամադրվել են գրենական պիտույքների փաթեթներ, հագուստ:

Դավթաշենի Ս. Նահատակաց եկեղեցուն կից գործող «Հովհան Ոսկեբերան» դպրոցի **33 սաների**, ինչպես նաև Սրբոց Նահատակաց եկեղեցու համայնքի անապահով **10 ընտանիքի** նվիրաբերվել են գրենական պիտույքների փաթեթներ և հագուստ:

Նուբարաշենի Ս. Նահատակաց եկեղեցու համայնքի անապահով ընտանիքների **60 երեխաների** բաժանվել են գրենական պիտույքների փաթեթներ և հագուստ:

Երկրապահ Կամավորների Միության և «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամի կողմից «Եռաբլուր» պանթեոնում կազմակերպված մեծարման և հիշատակի միջոցառման մասնակից թիվ 155 դպրոցի **30 սաների** նվիրաբերվել են գրենական պիտույքների փաթեթներ:

Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ թեմում կյանքի կոչված բարեգործական ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել **155 հաշմանդամություն ունեցող անձի**: Իրականացվել են նաև տնայցեր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքներ:

Ամանորի, Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոների կապակցությամբ իրականացվել է բարեգործական ծրագիր, որի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել 1**23 հոգու:**

Մարդասիրական ծրագրերի կարևոր մասն են կազմել տնայցերը բազմազավակ և անապահով ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց , միայնակ ծերերի բնակարաններ:

Օժանդակություն է ցուցաբերվել թեմին հոգևոր և նյութական աջակցության խնդրանքով դիմած հետևյալ տեղական հասարակական կազմակերպություններին, միություններին և ընկերություններին.

- «Զեյթուն» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Լույսի Աստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
- «Զոհված ազատամարտիկների մայրերի խորհուրդ» ՀԿ

- «Էրեբունի համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքներ» ընկերություն
- «Մարիամ» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ
- «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամ
- «Տաթև» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ
- «Լուսաշող» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ
- «Հուսաստղ» հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների ՀԿ
- «ԿՈԲՐԱ» բարեգործական ՀԿ
- Արաբկիր համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց ընկերություն
- «Ալեքս» ՀԿ
- «Հավատ և սեր» ԲՀԿ
- «ՍԿԻԶԲ» խոցելի խմբերի աջակցության ՀԿ

Թեմի կրթական հաստատությունների, ծխական և կիրակնօրյա դպրոցների, ինչպես նաև մանկական երգչախմբերի սաները նույնպես եղել են թեմի բարեգործական ծրագրերի ուշադրության կենտրոնում: Պարբերաբար օգնություն է տրամադրվել թեմի եկեղեցիների ծխականներին և կարիքավոր հավատացյալներին:

Բազմակողմանի աջակցություն է ցուցաբերվել հետևյալ հաստատություններին.

1. Երևանի Ն. Տիգրանյանի անվան տեսողական խանգառումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց

2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ

3. Հաշմանդամություն ունեցող երեխաների Ավանի ցերեկային կենտրոն

4. Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն

5. Երևանի «Մանկան տուն»

6. Նոր Նորքի թիվ 17 հատուկ դպրոց

7. «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարան

8. Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ

9. «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի Մասիսի ցերեկային կենտրոն

11. ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն»

12. Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն

2017թ. Արարատյան Հայրապետական թեմում իրականացված բարեգործական ծրագրերի արդյունքում օգնություն է ստացել (հագուստ, հիգիենայի պարագաներ, կոշիկ, դպրոցական պարագաներ, պայուսակներ, խաչեր, սնունդ, խաղալիքներ, կոշիկ, հոգևոր և մանկական գրականություն) բազմազավակ, միայնակ, հաշմանդամ, ծնողազուրկ և կարիքավոր մոտավորապես 2000 շահառու:

Թեմի «Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ»-ի հետ համատեղ ծրագրերից զատ հոգևոր սպասավորների և անհատ բարերարների համագործակցության արդյունքում բարեգործական միջոցառումներ են իրականացվել հետևյալ սոցիալական խմբերի համար

- Անապահով և բազմազավակ ընտանիքներ
- Մանկատներ
- Ծերանոցներ
- Հոգեբուժարաններ
- Զինվորներ և նրանց ընտանիքներ
- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Ազատազրկման մեջ գտնվող անձինք

Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակ

Նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ

13.000 երեխաների:

Հատկացվել է

160.090 ԱՄՆ դոլար՝

698 ծնողազուրկ,

ինչպես նաև բազմազավակ ընտանիքներում ապրող

57 երեխաների համար:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀԵԵՄ կրթադաստիարակչական կենտրոն

2017 թվականին կենտրոնում կազմակերպվել են՝

1. **Ամառային դպրոց,** որտեղ անց են կացվել ասեղնագործության, նկարչության, կավագործության, բատիկի, օրիգամիի, շախմատի, անգլերենի, հոգևոր երգերի ուսուցման, թատերական, ռուսերենի, մայրենի խոսքի, դիզայներական, քրիստոնեական, հոգեբանության խմբակներ: Մասնակցել է 50 երեխա:
2. **Սրբանկարչության դասընթաց,** որին մասնակցել է 18 երեխա
3. **Գրաբարի խմբակ,** որը շարունակական բնույթ ունի, մասնակցում է 18 երիտասարդ:
4. **Երգչախումբ**՝ հաշմանդամություն ունեցող 10 երեխաների համար

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՕՐԵՐ

«Գրաբարյան օրեր» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ Երևանի և Արարատի մարզի հիմնական ու ավագ դպրոցների ուսուցիչների գրաբարի մասնագիտական վերապատրաստում:

Հանդիպումը նպատակ ուներ թարմացնել ուսուցիչների գիտելիքները, խնդրահարույց հարցերի մասին մասնագիտական խորհուրդներ փոխանցել և պատասխանել հուզող հարցերին: Վերապատրաստման ծրագրին աջակցեցին ՀՀ ԿԳՆ և Երևանի քաղաքապետարանի հանրակրթական վարչությունները:

ԾԽԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Հատուկ կարևորվում է նաև երիտասարդների շնորհների բացահայտումն ու ինքնահաստատումը հասարակական կյանքում:

Թեմում գործում է՝

Երիտասարդաց 25 միություն

681 անդամներով:

Երիտասարդաց միությունների հետ կազմակերպվում են Աստվածաշնչի սերտողություններ, հոգևոր զրույցներ, ազգային–եկեղեցական տոների առթիվ միջոցառումներ, ուխտագնացություններ, խաչերթեր, սոցիալական ծրագրեր:

ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական-համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ տիկնանց միության անդամները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին, կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին:

Թեմում գործում է՝

Տիկնանց 15 միություն

337 անդամներով:

ՇԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականներին հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից:

ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑ

Այս կառույցի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Երեխաների քրիստոնեական դաստիարակությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների զորացման գրավականն է:

Թեմում գործում է

կիրակնօրյա 13 դպրոց

845 աշակերտներով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ.

- **ԳՐԱԲԱՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ**. Շտեմարանի մեջ ներառված են գրաբարի օլիմպիադայի մասնակցության համար նախատեսված հանձնարարությունները: Այն նպատակ ունի նշանակալիորեն ազդել դպրոցներում գրաբարի ուսուցման ու տարածման գործընթացի վրա, օգնել ուսուցիչներին մեթոդական կողմնորոշման հարցում: Շտեմարանի հեղինակներն են դոցենտ, ԵՊՀ և Գևորգյան հոգևոր ճեմարանի գրաբարի դասախոս Նորայր Պողոսյանը, Երևանի Գ. Գյուլբենկյանի անվան թիվ 190 դպրոցի փոխտնօրեն Լուիզա Սարգսյանը, «Այբ» դպրոցի գրաբարի ուսուցիչ Աստղիկ Կարապետյանը:
- **ԺԵՍՏԵՐԻ ԼԵԶՎՈՎ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԵՍԱՍԿԱՎԱՌԱԿ.** Տեսասկավառակը ներառում է աստվածաշնչային 365 հոլովակներ, որոնցից՝ 237 հոլովակ «Հին Կտակարանը ժեստերի լեզվով» (500 օրինակ խմբաքանակով) և 128 հոլովակ «Նոր Կտակարանը ժեստերի լեզվով» (2000 օրինակ խմբաքանակով):
- **ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ**. Ս. Ներսես Շնորհալի. Աղոթագիրքը հրատարակվել է 1000 օրինակից Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ, Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանի նախաձեռնությամբ:



2017 թվականի ընթացքում Արարատյան Հայրապետական թեմում օծվել են.

- Ապրիլի 6-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեց Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցու բակում տեղադրված խաչքարը: Այն նվիրված է ապրիլյան պատերազմի նահատակների հիշատակին:
- Մայիսի 7-ին Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեց Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու արծաթակուռ մասունքակիր խաչը:
- Մայիսի 12-ին Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ օծվեց Նորք Մարաշ վարչական շրջանի Ս. Աստվածածին եկեղեցու բակում տեղադրված խաչքարը:
- Հունիսի 20-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը Ս. Երրորդություն եկեղեցում օծեց Սուրբ Խորանի նոր սրբապատկերը և օրհնեց Ս. Խորանի նոր վարագույրը:
- Հոկտեմբերի 22-ին Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեցին Շամիրյան ընտանիքի կողմից Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցուն ընծայաբերված երեք զանգերը:
- Հոկտեմբերի 24-ին Արմավիրի թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ օծվեց Արարատ քաղաքի նոր կառուցվող եկեղեցու կենտրոնական խաչը:
- Դեկտեմբերի 15-ին Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում օծվեցին սրբապատկերներ, խաչվառներ ու վեմ քարեր:

©ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ,
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ
2018թ.



www.qahana.am